ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» 01 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-27/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2015թ. թիվ 1/73-1/24155-15 գրությամբ ներկայացված «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02563667) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 02.09.2015թ. թիվ 1/73-1/24155-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի

առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.08.2015թ. թիվ 09/2163 գրության և կից փաստաթղթերի պատճենները:

2. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 17.09.2015թ. թիվ 02/04.1/2415-15 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է Ընկերությանը:

Ընկերությունը 30.09.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն մինչև Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացնելը տեղեկացված է եղել, որ արտադրող ընկերությունում առկա է ՊԱԳ հավաստագիր, սակայն դրա գործողության ժամկետի վերաբերյալ տեղեկացված չի եղել, քանի որ հավաստագիրը վերաբերում է արտադրող ընկերությանը և գտնվել է նրա տիրապետության ներքո:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պահանջից հետո միայն «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն, արտադրող ընկերությունից ստանալով ՊԱԳ հավաստագիրը, պարզել է, որ վերջինիս գործողության ժամկետը լրացել է դեռևս 2007թ. նոյեմբեր ամսին, որից հետո «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի պահանջով արտադրող ընկերությունը ներկայացրել է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 29.07.15թ. թիվ 0101139315 գրությունը, որը հավաստում է, որ «Ֆարմատեք» ՍՊԸ-ի՝ ՊԱԳ-ին համապատասխանեցնելու աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Ընկերությունը հայտնել է, որ վերջինս նպատակ չի հետապնդել կեղծ տեղեկատվություն, փաստաթուղթ տրամադրելու կամ փաստեր խեղաթյուրելու, այլ արտադրող ընկերության կողմից ՊԱԳ-ի համապատասխանության վերաբերյալ իրեն

տրամադրված բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո անմիջապես ներկայացրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ առանց որևէ բովանդակային փոփոխության:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 28.08.2015թ. թիվ 09/2163 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 14.07.2015թ. ներերակային օգտագործման համար հեղուկների ձեռք բերման նպատակով հայտարարվել է «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակներում սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՓԲԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2015թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի որոշմամբ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու հետևանքով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Ընթացակարգի քարտուղարի կողմից մասնակցից համապատասխան ծանուցմամբ պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են բոլոր փաստաթղթերը՝ բացառությամբ պատշաճ արտադրության գործունեության համապատասխանության հավաստագրի:

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետի՝ մասնակցին էլեկտրոնային ծանուցմամբ տրամադրվել է մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունը շտկելու նպատակով, որի արդյունքում մասնակցի կողմից ներկայացվել է «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանի գրությունը այն մասին, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ներկայում չունի ՊԱԳ-ի համապատասխանելիության սերտիֆիկատ, ինչպես նաև «Ֆարմատեք» ՓԲԸ-ին տրամադրված ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիրը, որի գործողության ժամկետը սահմանված է մինչև 2007թ. նոյեմբեր ամիսը: Հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ մասը՝ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Ըստ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է կեղծ տեղեկատվություն և ի կատարումն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի, Պատվիրատուն ներկայացրել է 14.07.2015թ. հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՖ-ԳԲԽ-27/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2015թ. թիվ 1/73-1/24155-15 գրությամբ ներկայացված «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 14.07.2015թ. դեղերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՓԲԸ-ն:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամն Ընթացակարգի Հրավերի N 1 հավելվածով գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարտադիր պայման է հանդիսացել ՊԱԳ (պատշաճ արտադրության գործունեություն) GMP ստանդարտներին համապատասխանության առկայությունը (Արտադրողի ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի առկայությունը):

3. Ընթացակարգի քարտուղար Մ. Կարապետյանը europharmarmenia@ yahoo.com էլեկտրոնային փոստին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 23.07.2015թ. գնահատող հանձնաժողովի նիստի որոշմամբ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և միևնույն ժամանակ խնդրել է մինչև 29.07.2015թ. ներառյալ ներկայացնել հրավերով սահմանված հավաստումները, այդ թվում առաջարկվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը՝ ներառյալ ապրանքատեսակների արտադրող կազմակերպության կողմից ՊԱԳ-ի (GMP) համապատասխանության հավաստագիրը:

4. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է Ընթացակարգի Հրավերով սահմանված՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը, ներառյալ առաջարկվող ապրանքատեսակների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

5. Ընթացակարգի քարտուղար՝ Մ. Կարապետյանը, 28.07.2015թ. europharmarmenia@yahoo.com էլեկտրոնային փոստին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ սահմանված ժամկետում «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ապրանքատեսակների արտադրող կազմակերպության կողմից տրամադրված ՊԱԳ-ի (GMP) համապատասխանության հավաստագիրը: Ծանուցմամբ քարտուղարը «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին հայտնել է, որ մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է

ներկայացնել հրավերով պահանջվող վերը նշված փաստաթղթերը, իսկ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը կմերժվի (հիմք՝ Կարգի 51-րդ և 52-րդ կետի 2-րդ ենթակետ):

6. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է «Ֆարմատեք» ՓԲԸ-ի ՊԱԳ-ի հավաստագիրը, որի գործողության ժամկետը սահմանված է եղել մինչև 2007թ. նոյեմբեր ամիսը, ինչպես նաև «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 29.07.2015թ. թիվ 0101139315 գրությունը, որի համաձայն՝ «Ֆարմատեք» ՓԲԸ-ի ՊԱԳ համապատասխանության հավաստագիր ստանալու աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետով, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը և մինչև նույն թվականի օգոստոսի 5-ը ժամը 10:00-ն փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով «Լիկվոր» ՓԲԸ-ին:

8. «ՖարմաՏեք» ՓԲԸ-ն 15.01.2016թ. թիվ 006-16F գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Գալստյանի կողմից 2015թ. հուլիսին բանավոր հարցում է կատարվել «ՖարմաՏեք» ՓԲԸ-ի կողմից ՊԱԳ-ի հավաստագրի ստացման վերաբերյալ, որին ի պատասխան վերջինս հայտնել է, որ ՊԱԳ-ի հավաստագիր «ՖարմաՏեք» ՓԲԸ-ն ստացել է, սակայն դրա գործունեության ժամկետի վերաբերյալ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Գալստյանին մանրամասներ չի ներկայացվել:

5. ՍՖ-ԳԲԽ-27/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի 30.09.2015թ. գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած 28.08.2015թ. թիվ 09/2163 գրությունը և կից փաստաթղթերը, «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «ՖարմաՏեք» ՓԲԸ-ի 15.01.2016թ. թիվ 006-16F գրությունը, հայտնում է հետևյալը.

«Ֆարմատեք» ՓԲԸ-ի արտադրանքը ներկայացնող «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն, մասնակցելով «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել Ընթացակարգի Հրավերով սահմանված՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը՝ ներառյալ առաջարկվող ապրանքատեսակների անվանումները և տեխնիկական բնութագրերը՝ հիմք ընդունելով «ՖարմաՏեք» ՓԲԸ-ի հավաստումն այն մասին, որ «ՖարմաՏեք» ՓԲԸ-ն ստացել է ՊԱԳ-ի հավաստագիր, ինչը հաստատվում է նաև «ՖարմաՏեք» ՓԲԸ-ի 15.01.2016թ. թիվ 006-16F գրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պահանջից հետո միայն «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն, արտադրող ընկերությունից ստանալով ՊԱԳ հավաստագիրը, պարզել է, որ վերջինիս գործողության ժամկետը լրացել է դեռևս 2007թ. նոյեմբեր ամսին, որից հետո «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի պահանջով արտադրող ընկերությունը ներկայացրել է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 29.07.15թ. թիվ 0101139315 գրությունը, որը հավաստում է, որ «Ֆարմատեք» ՍՊԸ-ի՝ ՊԱԳ-ին համապատասխանեցնելու աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Այսպիսով, Ընկերությունը «ՖարմաՏեք» ՓԲԸ-ի ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի ժամկետը լրացած լինելու և նոր հավաստագիրը ստանալու աշխատանքները դեռևս ավարտված չլինելու (ավարտական փուլում գտնվելու) վերաբերյալ տեղեկանալուց և «ՖարմաՏեք» ՓԲԸ-ի կողմից տրամադրված բոլոր փաստաթղթերը իր տրամադրության տակ անցնելուց հետո անմիջապես, առանց որևէ

բովանդակային փոփոխության ներկայացրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հնարավորություն տալով վերջինիս՝ Ընկերության հայտը բավարար գնահատելու կամ մերժելու վերաբերյալ որոշումն ընդունել՝ առկա իրավիճակից ելնելով, այն դեպքում, երբ Ընթացակարգի հրավերով սահմանված չէ որևէ հստակ պահանջ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագրերը ներկայացնելիս արտադրողի ՊԱԳ-ի համապատասխանությունը հավաստող փաստափուղթը նույնպես ներկայացնելու վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս մեկնաբանելու, որ վերոնշյալ փաստաթղթի առկայությունը պարտադիր է միայն ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի մատակարարման ժամանակ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակում չի ներկայացվել կեղծ տվյալ, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2015թ. թիվ 1/73-1/24155-15 գրությամբ ներկայացված «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02563667) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-27/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան